**Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրա (5 դասաժամ), քիմիա (10 դասաժամ), կենսաբանություն (10 դասաժամ), ռուսաց լեզու (5 դասաժամ), ինֆորմատիկա (7 դասաժամ), ֆիզիկա (10 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրուցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.դիմում (ձև 1),

2. 1 լուսանկար 3×4 չափի,

3.բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

4.անձը հաստատող փաստաթուղթ,

5.<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում),

6.ինքնակենսագրություն(ձև 5),

7.այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

9.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),

10.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մարտի 12-ից մինչև մարտի 25 -ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,բացի շաբաթ ,կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցութը տեղի կունենա **2024թ. մարտի 27-ին՝ ժամը 14:00-ին**, Շահումյանի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Շահումյան, Ի.Հարությունյան 1 փակուղի, շենք 4: Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 093845657: